Հայ-Ռուսական համալսարանում գործող

ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին

(Հայաստանի Հանրապետություն, 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123)

ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻԱՄ ԱՐԱՅԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համատեքստում» վերտառությամբ ԺԲ.00.06- Միջազգային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած, սակայն դեռևս միջազգայնորեն չճանաչված պետության կարգավիճակում գտնվող երկրների քաղաքացիների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Աշխատանքի գիտական նորույթը կասկած չի հարուցում, ինչը պայմանավորված է ատենախոսի կողմից ներկայացվող հարցադրումներով, ձևավորված դիրքորոշումներով և գիտական հարթության վրա գտնվող առաջարկություններով: Պետք է նշել, որ հայաստանյան իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվում բացահայտել իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած, սակայն դեռևս չճանաչված պետության կարգավիճակում գտնվող երկրների քաղաքացիների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրները, ինչպես նաև չճանաչված պետությունների քաղաքացիների իրավունքների խոցելիության պատճառները: Ատենախոսությունում քննարկման առարկա են դարձել նաև այն կոնկրետ իրավունքները և ազատությունները, որոնք նման տարածքներում առավել հաճախ են ոտնահարվում, և որոնց պաշտպանությունը միջազգային իրավական կառուցակարգերի միջոցով բավականին խնդրահարույց է:

Հեղինակն ուսումնասիրության համար ընտրել է, որոշակի մեթոդաբանական հիմք՝ ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական) մեթոդներ: Հետազոտության ընթացքում առավելագույնս օգտագործվել է համեմատական իրավական վերլուծություն՝ տարբեր չճանաչված պետություններում մարդու իրավունքների հնարավոր խախտումների առնչությամբ: Այս մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտել մարդու իրավունքների

միջազգային իրավական պաշտպանության միջոցներից փաստացի զրկված անձանց իրավունքների պաշտպանության հիմնախնդրի էությունը՝ վերհանելով դրանց իրավական նախադրյալները, առաջարկելով ստեղծված իրավական փակուղուց դուրս գալու հնարավոր լուծումներ:

Աշխատանքը հատկապես արժևորվում է միջազգային պրակտիկային վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությամբ: Աշխատության մեջ ուսումնասիրվում և ամփոփվում է մասնագիտական գրականության լայն շրջանակ, միջազգային և ներպետական փաստաթղթեր՝ ՄԱԿ-ի կանոնադրությունը, ՄԱԿ-ի հովանու ներքո ընդունված մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար փաստաթղթերը, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը, ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումները, Մարդու իրավունքների և հիմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ու դրա կից արձանագրությունները, ինչպես նաև ՄԻԵԴ-ի մի շարք նախադեպային նշանակության որոշումները, չճանաչված պետությունների ներպետական իրավական ակտերը:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, 3 գլուխներից, 6 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու գրականության ցանկից: Հետազոտությունում հմտորեն օգտագործվում է մասնագիտական լեզվական պաշար, շարադրանքը և ձևավորումը համապատասխանում է ընդունված գիտական չափորոշիչներին:

Առաջաբանում հիմնավորվում է թեմայի արդիականությունը և ատենախոսության աշխատանքի գիտական նորույթը, որոշակիացվում են վերջինիս մեթոդաբանական ու տեսական հիմունքները, նրա նպատակներն և խնդիրները, ձևակերպվում են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ինչպես նաև հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական կարևորությունը: Առաջաբանը տեղեկություններ է պարունակում նաև հետազոտության արդյունքների փորձարկման վերաբերյալ:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է ազգերի ինքնորոշման իրավունքի և դրա, որպես իրավական սկզբունքի ծագմանը, զարգացմանը և բովանդակությանը: Ողջունելի է, որ հեղինակը բազմակողմանիորեն անդրադարձ է կատարել ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ծագմանը և զարգացմանը՝ սկսած Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակներից մինչև մեր օրերը: Բացի այդ, ուսումնասիրության նյութ է դարձել ինքնորոշման իրավունքը՝ որպես միջազգային իրավունքի ***jus cogens*** սկզբունքի կայացում և վերջինիս էության բացահայտում:

Աշխատության երկրորդ գլխում դիտարկվում են այսօր աշխարհում գործող մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերի ծագման և հետագա զարգացման հիմնահարցերը: Հատկապես գովելի է, որ այս գլխում մանրամասն կերպով վերլուծվում են իրենց ինքնորոշման իրավունքն իրագործած և սեփական

պետությունը ստեղծելու ցանկություն ունեցող ազգերի և ժողովուրդների ամենատարբեր մակարդակներում ի հայտ եկող իրավունքների բազում խախտումները:

Երրորդ գլխի հետազոտության առարկա է հանդիսանում արցախահայության ազգային ազատագրական պայքարի՝ միջազգային իրավունքի իրավունքի նորմերին ու սկզբունքներին համապատասխանության հարցը: Հեղինակը նաև անդրադարձել է արցախահայերի իրավունքների և օրինական շահերի միաջազգային-իրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրներին՝ մանրամասն վերլուծելով ՄԻԵԴ համապատասխան նախադեպային որոշումները:

Մարիամ Գրիգորյանի ատենախոսությունը, միանշանակ դրական գնահատելով որպես միջազգային իրավական կարևոր խնդիրների ինքնուրույն և արժեքավոր հետազոտություն՝ նաև պետք է նշել աշխատանքում տեղ գտած որոշ վիճահարույց դրույթներ և թերություններ: Մասնավորապես՝

1. Որոշ դրույթներում ատենախոսը հաճախակի կրկնվում է: Մանավորապես, ինքնորոշման իրավունքի կապակցությամբ քաղաքական ենթատեքստի առկայության թեզը երբեմն դառնում է հեղինակի կողմից կատարվող հիմնավորումների հիմքը, որոնց մասին բավական էր միայն մեկ անգամ նշել:
2. Հեղինակը պետք է ավելի կոնկրետ լիներ իր առաջարկություններում: Օրինակ՝ չճանաչված սուբյեկտներին պետք է թույլատրել միանալ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ եվրոպական կոնվենցիային, թե՞ պարզապես ՄԱԿ-ի շրջանակներում պետք է ստեղծվեն դրանց պաշտպանության հատուկ մեխանիզմներ:
3. Երբ խոսքը գնում է հենց չճանաչված պետությունների հանրային իշխանությունների կողմից խախտումների դեմ պահանջներին, անհասկանալի է, թե ինչպե՞ս է սահմանվելու մարդու իրավունքների միջազգային դատարանների *ratione personae* իրավասությունը, քանի որ չճանաչված պետությունները չեն հանդիսանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև այլ միջագային իրավական փաստաթղթերի կողմ:
4. Ատենախոսության օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում առկա են որոշ տեխնիկական թերացումներ:

Վերը նշված հարցադրումները, բնականաբար չեն նվազեցնում թեկնածուական ատենախոսության արժեքը և գիտական նշանակությունը:

Ամփոփելով վերոնշյալը, կարող ենք փաստել, որ ատենախոսությունը պատրաստված է պատշաճ գիտական մակարդակով: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի թվով 9 գիտական հոդվածներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Մարիամ Արայիկի Գրիգորյանի «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական հմտություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություններ, ներկայացրել է պատշաճ մակարդակի տեսագործնական աշխատանք, որի համար կարող է արժանանալ ԺԲ.00.06-Միջազգային իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Հակոբյան Լիանա Օնիկի

17.06.2024թ.

Լիանա Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ վճռաբեկ դատարանի

աշխատակազմի ղեկավար **Ֆիլիպ Ղազարյան**